

<i>Համարը N 1928-Ն</i>	<i>Տեսակը Մայր</i>
<i>Տիպը Որոշում</i>	<i>Կարգավիճակը Գործում է</i>
<i>Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 28.02.07./13(537)</i>	<i>Ընդունման վայրը Երևան</i>
<i>Հոդ.255</i>	
<i>Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն</i>	<i>Ընդունման ամսաթիվը 21.12.2006</i>
<i>Ստորագրող մարմինը ՀՀ Վարչապետ</i>	<i>Ստորագրման ամսաթիվը 03.02.2007</i>
<i>Վավերացնող մարմինը ՀՀ Նախագահ</i>	<i>Վավերացման ամսաթիվը 12.02.2007</i>
<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 10.03.2007</i>	<i>Ուժը կորցնելու ամսաթիվը</i>

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԻ ԲՆԱԿՏՈՐՆԵՐԻ ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ԼԻՆԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՒ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
 Հայաստանի Հանրապետության
 Նախագահ Ռ. Քոչարյան
 12 փետրվարի 2007 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 դեկտեմբերի 2006 թվականի N 1928-Ն

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԻ ԲՆԱԿՏՈՐՆԵՐԻ ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ԼԻՆԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՒ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**

1. Հաստատել թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի բնակտորների հազվագյուտ լինելու չափանիշները, գնահատման ու վճարման պայմանները և կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
 վարչապետ**

Ա. Մարգարյան

2007 թ. փետրվարի 3
 Երևան

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԻ ԲՆԱԿՏՈՐՆԵՐԻ ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ԼԻՆԵԼՈՒ ԶՄՓԱՆԻՇՆԵՐԸ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՒ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

1. Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի բնակտորների հազվագյուտ լինելու չափանիշներով, գնահատման ու վճարման պայմաններով և կարգով (այսուհետ՝ կարգ) սահմանվում են թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի՝ հազվագյուտներին վերագրելու չափանիշները, և կարգավորվում են դրանց գնահատման ու վճարման պայմանների հետ կապված հարցերը:

2. Թանկարժեք մետաղների բնակտորներ են արմատական և ցրոնային հանքավայրերում բնածին թանկարժեք մետաղների տարանջատումները, որոնք իրենց չափսերով խիստ տարբերվում են թանկարժեք մետաղների գերակշռող մասնիկներից և ունեն 0,1 գրամից ոչ պակաս զանգված: Հազվագյուտ են համարվում բնության մեջ հազվադեպ հանդիպող թանկարժեք մետաղների բնակտորները, որոնք ունեն հատուկ հանքաբանական, կազմաբանական, չափաքանակային բնութագիր կամ դրանց համատեղությունը:

3. Թանկարժեք մետաղների հազվագյուտ բնակտորներ են՝

3.1. Ոսկու բնակտորներ.

ա) արմատական հանքավայրերից՝

բյուրեղներ, դենդրիտներ և դրանց կցաճումներ՝ 1 գրամ և ավելի զանգվածով, անկանոն ձևի կուտակումներ՝ 5 գրամ և ավելի զանգվածով.

բ) ցրոնային հանքավայրերից՝

բյուրեղներ, դենդրիտներ և դրանց կցաճումներ՝ 5 գրամ և ավելի զանգվածով, որոնք ունեն հարթեցվածության և ողորկության ցածր աստիճան,

50 գրամ և ավելի զանգվածով անկանոն ձևի գոյացություններ, որոնք ունեն հարթեցվածության և ողորկության ցածր աստիճան,

1000 գրամ և ավելի զանգվածով անկանոն ձևի գոյացություններ՝ անկախ հարթեցվածության և ողորկության աստիճանից:

3.2. Արծաթի բնակտորներ՝ արմատական և ցրոնային հանքավայրերից՝

բյուրեղներ, դենդրիտներ և դրանց կցաճումներ՝ 0,5 գրամ և ավելի զանգվածով, անկանոն ձևի գոյացություններ՝ 5 գրամ և ավելի զանգվածով:

3.3. Պլատինի և պլատինի խմբի մետաղների բնակտորներ.

ա) արմատական հանքավայրերից՝

բյուրեղներ և դրանց կցաճումներ՝ 1 գրամ և ավելի զանգվածով, անկանոն ձևի գոյացություններ՝ 5 գրամ և ավելի զանգվածով.

բ) ցրոնային հանքավայրերից՝

բյուրեղներ և դրանց կցաճումներ՝ 5 գրամ և ավելի զանգվածով, որոնք ունեն հարթեցվածության և ողորկության ցածր աստիճան,

անկանոն ձևի գոյացություններ՝ 20 գրամ և ավելի զանգվածով, որոնք ունեն հարթեցվածության և ողորկության ցածր աստիճան,

անկանոն ձևի գոյացություններ՝ 200 գրամ և ավելի զանգվածով՝ անկախ հարթեցվածության և ողորկության աստիճանից:

3.4. Բնակտորներ, որոնք կապված են որևէ պատմական իրադարձության կամ հանրահայտ անձի

հետ, որոնք մեծ դեր են ունեցել պատմության, գիտության և մշակույթի մեջ:

3.5. Բնակտորներ, որոնք կապված են երկրում թանկարժեք մետաղների արդյունահանման պատմության զարգացման հետ:

3.6. Բնակտորներ՝ հանրահայտ հավաքածուներից և թանգարաններից:

3.7. Բնակտորներ՝ արտասովոր ձևի:

4. Թանկարժեք քարերի հազվագյուտ խմբին դասվում են՝

4.1. 50 կարատ և ավելի քաշով ավաաստներ:

4.2. Ալմաստներ, որոնք օժտված են հետևյալ մեկ կամ բոլոր բացառիկ բնութագրիչներով՝ ձևով, հազվագյուտ բացառիկ գույներով՝ բարձր մաքրության համադրությամբ, ներփակումների բնութագրերով և բյուրեղագրաֆիկական ուրվագծերով՝ անկախ ավաաստի քաշից (առնվազն մեկ կարատի համար՝ մեկ մլն հինգ հարյուր հազ. դրամ արժեքով):

4.3. 20 կարատ և ավելի քաշով ադամանդներ, ինչպես նաև ադամանդներ, որոնք բացառիկ են կառուցվածքով, գույներով և որակական բնութագրիչներով (առնվազն մեկ կարատի համար՝ հինգ մլն դրամ արժեքով):

4.4. Անմշակ գմրուխտներ (հանքակտորներ, բյուրեղներ կամ գմրուխտների բյուրեղների կցաճումներ) առաջին գույնի (մուգ կանաչ), 1-ին և 2-րդ տեսակների, որոնք հետաքրքրություն են ներկայացնում իրենց բյուրեղների կառուցվածքով և հանքային համակցությամբ, ինչպես նաև 10 մմ և ավելի չափսի կոտրվածքները, առաջին գույնով (մուգ կանաչ), բարձր աստիճանի թափանցիկությամբ՝ ներքին փայլով (խումբը՝ էքստրա):

4.5. 10 կարատ և ավելի քաշով մշակված գմրուխտներ, որոնք բացառիկ են իրենց գույնով, կառուցվածքով և որակով, առաջին գույնով (մուգ կանաչ), 1-ին և 2-րդ խմբերի մաքրությամբ:

4.6. Անմշակ սուտակներ (ռուբին), շափյուղաներ (սապֆիր)՝ հազեցած գունային երանգներով, և ալեքսանդրիտներ՝ ուժեղ ալեքսանդրիտային էֆեկտով (հանքակտորներ, բյուրեղներ և բյուրեղների կցաճումներ), 1-ին և 2-րդ տեսակների, որոնք հետաքրքրություն են ներկայացնում իրենց բյուրեղների կառուցվածքով, հանքային համակցությամբ, որոնք ունեն լավ արտահայտված բնական կառուցվածքով բյուրեղներ:

4.7. 10 կարատ և ավելի քաշով մշակված սուտակներ, արնակարմիր գույնի՝ բիրմայական տիպի, 1-ին խմբի մաքրությամբ:

4.8. 10 կարատ և ավելի քաշով մշակված շափյուղաներ, բաց կապույտ գույնի՝ քաշմիրյան տիպի, 1-ին խմբի մաքրությամբ, ինչպես նաև հազվագյուտ գույների (դեղին, կանաչ, գազարագույն, մանուշակագույն):

4.9. 5 կարատ և ավելի քաշով մշակված ալեքսանդրիտներ՝ ուժեղ ալեքսանդրիտային էֆեկտով, 1-ին և 2-րդ խմբերի մաքրությամբ:

4.10. 5 կարատ և ավելի քաշով մարգարիտներ՝ սպիտակ, երկնագույն և սև գույների, որոնք ունեն լավ փայլ՝ սադափագույն նրբերանգով, տարբեր կառուցվածքի՝ ուղիղ, կոնաձև, ձվաձև, կաթիլաձև («բողբոջ») և անկանոն ձևի («բարոկկո»):

4.11. Թանկարժեք քարեր, որոնք կապված են որևէ պատմական իրադարձության կամ հանրահայտ մարդկանց հետ, որոնք մեծ դեր են ունեցել մշակույթի, պատմության և գիտության մեջ:

5. Հայաստանի Հանրապետության ընդերքից արդյունահանված թանկարժեք մետաղները և թանկարժեք քարերը, որոնք բավարարում են սույն կարգի 3-րդ և 4-րդ կետերով սահմանված պահանջներից որևէ մեկը, գնման նախապատվության իրավունք ունեցող մարմիններ ներկայացվելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում այդ մարմինների կողմից պետք է

ներկայացվեն Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի բնակտորների փորձագիտական հանձնաժողովին (այսուհետ՝ փորձագիտական հանձնաժողով), որում, բացի Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատողներից, կարող են ընդգրկված լինել նաև այլ գերատեսչության աշխատողներ:

Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի բնակտորները հազվագյուտ լինելու մասին որոշումը երեք աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է սույն կետում նշված փորձագիտական հանձնաժողովը՝ անցկացված փորձաքննության արդյունքների հիման վրա:

Հայաստանի Հանրապետության ընդերքից արդյունահանված թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հազվագյուտ բնակտորների վերաբերյալ փորձագիտական հանձնաժողովի կողմից կազմվում է փորձագիտական եզրակացություն, որը հաստատում է դրանց հազվագյուտ լինելու փաստը, և այդ բնակտորները ենթարկվում են հատուկ հաշվառման: Այդ արժեքների հաշվառման ձևը և կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարը:

6. Հայաստանի Հանրապետության ընդերքից արդյունահանված թանկարժեք մետաղները և թանկարժեք քարերը, որոնք բավարարում են սույն կարգի 3-րդ և 4-րդ կետերով սահմանված պահանջներից որևէ մեկը, իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի կամ ֆիզիկական անձանց ցանկությամբ, կարող են ներկայացվել փորձագիտական հանձնաժողովին՝ թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի բնակտորները հազվագյուտ լինելու մասին փորձագիտական եզրակացություն ստանալու նպատակով:

Սույն կետով սահմանված դեպքում իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը կամ ֆիզիկական անձինք ներկայացնում են «Մետաղափորձական պալատ» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ծառայության մատուցման համար վճարված անդորրագիրը:

7. Հայաստանի Հանրապետության ընդերքից արդյունահանված թանկարժեք մետաղները և թանկարժեք քարերը գնահատվում են փորձագիտական հանձնաժողովի կողմից՝ հաշվի առնելով համաշխարհային շուկայի գները:

8. Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի բնակտորների փորձագիտական հանձնաժողովի կանոնադրությունը և կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարը:

9. Հայաստանի Հանրապետության ընդերքից արդյունահանված թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հազվագյուտ բնակտորներն իրացվում են «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի համաձայն:

10. Պետական պահուստի համալրման նպատակով՝ Հայաստանի Հանրապետության պետական ֆինանսների կառավարման լիազոր մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության ընդերքից արդյունահանված թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հազվագյուտ բնակտորների գնման դեպքում վճարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան